

ՊԱՅՄԱՆՔ


ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՐ

Երկու րիս մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյս
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Դրանոցման տողը
20 անդիս

ԵՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄՆԵՆ ՉՈՐԵՔԵՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Դրոշինը ևս
չեմ տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԾԱՅՐ. ՍՐԵՆԵԼՔ

Անցեալ շաբթու հետապնդները հա-
ղորդելին թէ Ռուսիոյ և Ճարոնի մը-
ջեւ համաձայնութիւն զօրացած է վէ-
ճի առարկայ եղող գլխաւոր կետերու
վրայ : Այս լուրին առիթ տուած էր
Ռուսիոյ պատասխանը , որուն ամիսէ
մը ի վեր կը սպասուէր : Այդ պատաս-
խանին մանրամասնութիւնները տա-
կաւին չեն յայտնուած : Բայց սոս Զա-
փը յայտնի է որ Ռուսիա կարգ մը
զիջումներ ցրած է Մանչուրիոյ մասին
եւ ծանցած է Ճարոնի գերադասու-
թիւնը Գորէյայի մէջ :

Սակայն ինչպէս կերպեալ Ռուսիոյ
այդ զիջումները Ճարոնիները ըստ
բաւականին չեն գոհացուցած :
Բանակցութիւնները կը շարունակուին
Ռուսական դեսպանին եւ Ճարոնական
նախարարութեան միջեւ : Այս վեր-
ջինը հակառակ խորհրդարանին լուծո-
ւած ըլլալուն կայսրէն բացարձակ ի-
րաւասութիւն ստացած է Ռուսական
կնճիորը որ առաջ մարտիլու : Ճարոն
կառավարութիւնը Մանչուրիոյ խնդրոյն
մասին Ձին պետութեան իրաւունքնե-
րը պաշտպանելու ձեռով մը այս վերջ-
նոյն ընկերակցութեամբ բանակցու-
թիւնը յառաջ տանիլ կուզէ : Ռուսիա
իր շահերուն դէմ կը դանէ Ձինաստա-
նի պետական իրաւունքները պաշտպա-
նելու տեսակետով Ճարոնի բանակցու-
թիւնը եւ կուզէ որ Ճարոն բնաւ իօսքը
չենէ Ձին վիհայեցութեան իրաւունք-
ներուն : Եւ Ձինաստանի ալ կը ստի-
պէ որ իր առաջարկները ու պահանջ-
ները Ճարոնէն անկախ կերպով ներ-
կայացնէ : Բէքինի Ֆրանսական գե-
պանը եւս այս մասին ուժ կուտայ
Ռուսիոյ : Այս երեւոյթէն դժուար չէ
դատել թէ՛ Մայր , Սերեւիքի գեղին
ցեղերու համերաշխութիւնը այժմէն
իսկ վախ կազգէ եւրոպական պետու-
թեանց եւ ի մասնաւորի Ռուսիոյ :

Իրաւ ալ երբ նկատի աւելնանք 30-35
տարւոյ կարճ ժամանակամիջոցի մը
մէջ Ճարոնիոյ հակաքայլ յառաջդիմու-
թիւնները Եւրոպա ի քաղաքական ազ-
գերուն հասնող : Եւ մասնաւոր թէ
եթէ Ձին եւ Ճարոն համաձայնութեամբ
մը Ճարոնական քաղաքականութիւնը
մուտ գտնէ Ձինաստանի չորս հարիւր
միլիոնէ աւելի ժողովուրդին մէջ , եւ
անոնք , Ճարոն , Ձին եւ Քորէա , 500 000-
000 ի մօտեցնող գեղին ցեղը , վերջին
կատարեալագործութեամբ զինուին ու
մարզուին , ինչ ահալին ուժ մը կը
ներկայացնեն եւրոպան սարսափեցնող :
Ահա այս հետապնդները Ռուսիոյ մեծ
ահաբեկութիւն կը պատճառէ այժմէն

եւ այս պատճառաւ ալ բնաւ չուզեր
ներել որ Ձին կառավարութիւնը Ճա-
րոնի կրթնած ներկայացնէ իր պահանջ-
ները , այլ կը ջանայ համոզել որ ինք
առանձին բանակցի առանց միւսին
աջակցութեանը :

Գեղին ցեղը Սպիտակ ցեղին դէմ միա-
ցած անանկու մտածումով Ֆրանսացին
ալ որ ուժ կուտայ Ռուսիոյ , որպէսզի
Ձինաստանի եւ Ճարոնի միջեւ մեր-
ձեցուծը աւելի չը սերտանայ :

Հակառակ Ռուս Ճարոն վէճին հա-
մաձայնութիւնը մօտեցած ըլլալու
լուրերուն , դէռ մինչեւ այսօր Ռու-
սիա զինուոր կը փոխադրէ դէպի
Մայր : Արեւելք Օտեսայէ մեծ քա-
նակութեամբ զօրք եւ միջերկրականէն
երկու ուսական մարտանշաներ զը-
կուցան անցեալ օր , իսկ Բորթ-Ար-
թուր անազին չափով հանքահում կը
միջնորդէ :

Եթէ համաձայնութիւնը մօտայուտ
է , ինչու այս աստիճան հազճէպ
փոխադրութիւններ :

Այս հարցումին ժամանակը պիտի
պատասխանէ , եւ այդ ժամանակը հե-
ռու չէ :

ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ԾԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆԸ

Իտալիոյ արտաքին գործոց նախա-
րար պ. Թիլոնի երեւի . ժողովոյ մէջ
հարցադրուեցին առթիւ՝ տուած
պատասխանով Իտալիոյ Ֆրանսայի եւ
Անգլիոյ միջեւ կատարեալ համաձայ-
նութիւն տրելը յայտնելէ զատ ըսաւ .
« Իտալիան Գերմանիոյ կցող կապերուն
նման Իտալիոյ Աւստրո-Հունգարիոյ
հետ ունեցած զինակցական կապերը
զօրաւոր են եւ այնպէս՝ պիտի մնան :
Իտալիա երբեք ալ Ձինակցութեան հա-
ւատարմութիւն մնայ . որովհետեւ ա-
նկալ խաղաղութեան էր զօրաւոր ա-
պահովութիւնն է , եւ նախարարը ա-
ւելցուց , Երբեք ալ Ձինակցութիւնը մեր
Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ ունեցած
բարեկամութեան չը մնասեր »

Անցեալ չորեքշաբթի Աւստ-
րիոյ եւ Հունգարիոյ պատուիրակու-
թիւններուն առջեւ արտաքին գործոց
նախարար կոմս Կոլուսովսքի իր տա-
րեկան արտաքին քաղաքական համա-
րատութիւնը ձեռով մը ներկայա-
ցուց : Կոմսը նախ յայտարարեց թէ՛
Երբեք ալ Ձինակցութիւնը վերանորոգ-
ուած ըլլալով , Աւստրիոյ-Հունգարիոյ
քաղաքական շահերը ապահովին հա-
մար ալ ապահովուած են : Պալլադան
կամ Մակեդոնական խնդրոյն գալով ,
ըսաւ թէ՛ Ռուսիոյ հետ մեր բարեկա-
մական յարաբերութիւնները սերտա-
ցած են եւ Պալլադան մասին 1897 ին
կայացած համաձայնութիւնը աւելի
ուժով ցած է խաղաղութիւնը պահպա-
նելու նպատակաւ : Կոմս Կոլուսովսքի

զովեալ կարգաց Ռուսիոյ եւ Յու-
նաստանի ուղղած ժողովուրդին հա-
մար մակեդոնական դէպքերուն առ-
թիւ : Օտար վեհապետներուն վիշնա
կատարած այցելութիւնները յիշելով ,
զանի ըզրոյ պետութեանց միջեւ եղող
լաւ յարաբերութեանց ապացոյց նկա-
տեց :

Պատուիրակութիւններու ձեռքուն
ի պատասխան արտասանուած գահա-
ձուր ի մէջ այլոց սոս պարբերու-
թիւնը կը պարունակէր . « Ռուսաց
կայսրութեան հետ մեր սերտ համա-
ձայնութեանը աւելի խնամք կը տար-
ուի , որով Պալլադան խնդիրները
խաղաղութեան նպատակաւ կերպով
կը կարգադրուին » Թէ՛ Ռուսիա եւ թէ՛
Աւստրո-Հունգարիա , ամէն եռամս-
րական նկատու մնալէ ազատ , միայն
խաղաղութեան գործը մեր աչքին առ-
ջեւ ունինք . իսկ ամբողջ եւրոպա-
յի անգործութեան Մեր անձամբ տե-
սակցութիւնները սիրեցեալ զինակի-
ցիս՝ Գերմանիոյ կայսր , Ռուսիոյ
Չարին եւ Անգլիոյ թագաւորին հետ ,
առիթ տուին աւելի ամրապնդելու ու-
րել աշխարհեանց հետ մեր բարեկամա-
կան յարաբերութիւնները »

Նախարարներու եւ վեհապետներու
բերաններէն ամէն նստալըմներու
սկիզբին կը լսուին այս օրինակ
քաղցր խօսքեր , որոնք միւսմիտ ուն-
կեցրին աչքին առջեւ աշխարհը զը-
րախի կը նմանցնեն . բայց ամէն
տարի երեւան եկած իրողութիւնները
այդ ըստածներուն հակառակը ա-
պացուցած են : 1904-ի մէջ տեղի
ունենալիք զէպքերն ալ չենք կարծեր
որ նախորդ տարիներու զէպքերէն բա-
ցառութիւն կազմեն :

ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄՆԵՐԸ (*)

ՏՈՒՊԵՆՑԱՅ 5 դեկտ. 1903

Թուրքիա ԻԼԱՎԷՆԵՐԻ զրօշի
տակ կը կանգնէ

Ասկէ առաջ ձեզի գրած էի որ
Թուրքիան իր Պալլադական սահ-
մանագրութիւնը կը զօրացունէ : Հի-
մա կիմանաւ որ զրօշի տակ կան-
չուած են սահմանագրոյ մօտ
գտնուող գաւառաց « Իլավէ »
անուանեալ պահեստի զինուոր-
ները , որ ցրուած էին ամիսու
կէս առաջ : Անոնց բաժնուցան
ձուռայի , Միսիսիայի եւ ուրիշ
քաղաքներու միջնաւայրերուն
մէջ գտնուած հրացանները :

Նուերներու զեղծում

Հիմա ժողովուրդը Իլավէները ու
(Թուրք) սահմանագրի զինուոր-
ները հագած են մէջ մէկ վեհա-
րի , մէկ ասուի (Ֆլանել) մէկ
վերարկու եւ կամ մուշտակ , մէկ
զոյգ ալ ձեռնոց : Այս առարկա-
ները , ով դիտէ ինչպէս , գող-
յուած են այն յանձնարարե-
րէն , որոնց յանձնուած է բա-
րեւրտ անձերու կողմէ նուիրու-
ւած իրեղէնները բաշխել վերջին
ամառ թուրք զինուորներու վա-
րագրութեանց ենթարկուող Մա-
կեդոնացացութեանը լուր տա-
րածած են թէ այս զգեստները
իրենց նուիրուած են քրիստոն-
եայ բաշայէ մը , որ կը սիրէ ե-
զեր տաճիկ Սուլթանը եւ զօրքը :

Փախտակահանները ընդունող
Յաճախաւորները

Պարագրոյի քովի կամուրջին
վրայ հինգ անգամէ բազկացեալ
յանձնարար մը քանի մը ժա-
մանակէ ի վեր կապտէ այն փա-
խտականները որ Սուլթանին
գլխարկութեանը խիստ չուտով
կը հաւատան : Եւ գարձան ձու-
ռայի գաւառէն քանի մը հոգի
միայն որ գաղթած էին անցեալ
տարւան ապստամբութեան ժա-
մանակ : Այս վերադարձողներու
մեծ մասը ձեռքարկուցան եմին
չեւ այսօր կը հեծեն բանտերու
մէջ : Ինչպիսեալ իրենց տու-
ները աւարի տրուած , հրդեհ-
ուած եւ միսիր դարձած գետն

Յարքունիս գրաւեալ
աւազուածները

Մակեդոնիոյ տեղական ոստի-
կանական իշխանութիւնները յօ-
գուտ գանձին գրուած են ապրո-
տաժիւրբերու պատկանած ըլլալու
յանցանքով ամբաստանեալ ամին
Մակեդոնացաց ստացուածքերը :
Պատահած է որ ստացուածատէ-
րերու ազգականները զբաւական
մեծ գումարներով կրցած են ա-
զատել ստացուածքները , սակայն
երբեմն ալ իշխանութիւնները
բնաւին ետ տուած չեն այս տե-
սակ զբաւուած ինչք մը :

Խոզերուն վրայ տուրք

Արդէն գրած եմ ձեզ որ Սուլ-
թանին կառավարութիւնը նոր

տուրք դրած է Մակեդոնիայ մէջ
ընտանի կենդանիներու վրայ :
Խոզի մը համար կը վճարուի մին-
չեւ 10 դուռուշ տարեկան, 1 գու-
րուշ՝ խոզը արձանագրելու եւ 1
դուռուշ ալ անդորրագրի համար
կամ ընդամենը 12 դուռուշ : Իսկ
այս խոզոր տուրքը քիսա մը չըն-
երթ թուրք բնակչութեան, ու-
րովհետեւ ան ոչ խոզ կը պահէ
եւ ոչ իսկ կուտէ, այնպէս որ
տուրքը միայն քրիստոնեաներէն
կ'առնուի :

Եւ վերջը կ'ըսեն որ «բարե-
նորոգումները» ընդունուած են
«սկզբունքով» :

Սուրբաւի բարեկրօնի մը (°)

10 օր առաջ ծուռա քաղքին
մէջ մահնտիկը քաղաքացիներ-
ուն իմաց տուաւ թէ Սուլթա-
նի հրամանով «սաստիկ արգելեալ
է թուրքերուն» կենդանի կոշիկ
Պուլկարները, թէ Պուլկարներ-
ը եւ թուրքերը յետ այսորիկ
պիտի ապրին իբր եղբայր,
ինչպէս Սուլթանը կը փափաքի
թէ Պուլկարներուն ներուած են
այն ամեն յանցանքները զոր
գործերին թագաւորին դէմ, բա-
ւական է որ զլլու՝ յայտնեն այդ
մասին, թէ եղբայրս թուրքե-
րու արգելեալ է յառաջիկային
տեւէ զէնք կրելը, երբ քա-
ղաքին փողոցներուն մէջ կը պը-
տրուի :

Մահնտիկը այս թագաւորական
հրամանը հրատարակելէն յետոյ
հարիւրաւորեալ քաղքին մէջ զի-
նաթափ ըրաւ երեք թուրքեր
որ իրենց գօտիններուն մէջ շը-
ջահարներ (ռէվոլվեր) եւ դա-
շոյններ կը կրէին : Սակայն այս
բանը թուրքերը գրգռեց հարիւ-
րապետին դէմ. առ ալ վախճալով
գետնային երկկոյնի առնուած
զէնքերը եւ դարձուց իրենց տէ-
րերուն, եւ այսօր թուրքերը կը
շըջին ըստ հին սովորութեան,
ատրճանակներ եւ դաշոյններ
գօտիններուն մէջ :

Քրիստոնեայ ռատիկալներ

Սկսան քրիստոնեաներէն քա-
տիկան նշանակել : Ամբողջ ճու-
մայի գաւառին մէջ 6-7 հաւ
նշանակած են, ան ալ ամենա-
ստորին կարգի անհատներէ :

Լոռային

Տնկվելիէն քաղաք

ՕԳՆՈՒԹԻՒՆ

— 165 —

Հայաստանի խորքէն, ողորց սը-
տաշարժ աղաղակներ մեզ կը հասնին,
բաղդին եւ գուցէ նախախնամութեան
այդ տարաբաղդ զրկեալները, աւերակ
Հայաստանի այդ անտուն ու անտի-
րական բնակչութիւնը, վերահաս ձմե-
րան զարհուրելի էթնէ սարսափաւոր
հանրային ողորմութեան ապականած
օգնութիւն կը հայցէ, Յղանակին
դառնութիւնը նոյն իսկ իրենց կաշին
վրայ զգացող, հանրային հոգածու-
թենէ անտեսուած՝ մարդկային ամբող-
ջութեան մի մասը կազմող այդ լքեալ

թշուառները, աշնանային ազազուն
տեւերն ողորմելով զայլահայր, ան-
սուազութենէ զօսացեալ ձեռքերին
դէպի մեզ կ'արկաւած : Եւ ապառաժ
սրտերն անգամ կ'աղկոցեցնելու չափ
պաղատագին, պատառ մը հաց կը
խնդրեն, քուրջի մը կտոր՝ ի ծած-
կոյթ իւրեանց ցրտահար մարմնոյ ըն-
դարմացած մասին : զի ապրիլ կուղին
անտեք տակաւին, այո՛, ապրիլ եւ
ապրելնեւ նաեւ իրենց հոգեհատներն
ալ : Թուրքին եւ Գիւրտին սուրէն
մազապուր ազատուած Հայը, այսօր՝
ընտանաբար պիտի մասնուէր այն-
պիսի անել վիճակի մը, որուն ստեղծ-
ման համար տաճիկ ժաքովէ լախնու-
թիւնը եւ ոչ մի ջանք չէ՛ր ինչպիսի
Հայն գուրկ ընտանեկան պաշտ-
պանէն, միւր արգաւանդ արտերն առ
ի չգոյէ հայ մշակին, խոպան դարձած :
Ազգայնոց ինչքերն յափշտակուած
քիւրտ աշխիւթներէ, խառնափայտ օ-
րէնք եւ խմբագրուած ու ծրագրուած
ի մասնաւորի հայոց երթեւեկութիւնը
գծուաբացնելու եւ նոյն իսկ բոլորո-
վէն շարժելու : Կենաց եւ ընչից ա-
պահովութիւնը բացառականապէս ան-
սեւեռած : Եւ, որպէս իրենց որք
կարծուածէն չա՛տ աւելի աղէտաբեր
հարուած տուին հայու գոյութեան եւ
անոր անտեսական բարբառածման :
Կապելով ու կաշկանդելով հայ-վաճա-
ռականին ձեռքն ալ, ոտքն ալ՝ զայն
անկել կացութեան մը ինքնաբերական
նա, տարիներու երկար շարքին մէջ,
իւր քրտնաթոր ջանք արդար փա-
տա՛ն եղող, համեստ հարստութեան
օր աւուր սպառուած նշմարելով ինք-
զինքը բոլորովին բաղդին քա՛նաճո-
ղից յանձնած, բոպէ առ բոպէ իւր
ոչնչացման հեռապատկերին կ'ակնկալէ :
Հայ արհեստաւորն, նոյնպէս, կ'ստա-
րեալ անդորմութեան դատապարտուած,
անկարող է ալ եւս իր եւ իրենե-
րուն օրապահելին հայկեային : ու սըր-
տաւորութիւն վշակելով ծանրաբեռնեալ
զգայագրիկ մարդմեքներն մը է դար-
ձած, օրհասական ժամու հնչման կը
ոպասէ, նա, փակել առ յաւէտ իւր
աչքերը չի տեսնելու այլ եւս իր եւ
իւրայնոց արտաքին, անիծելու դժն-
եայ բաղդը որ վայրկի մը գէթ չի հա-
ճեցաւ իրեն ժպտել, եւ գուցէ անի-
ծելու իսկ այն . . . որը հակառակ
մարտիրոս ազգի մը սրտատուրը աղա-
չանաց՝ անկարելիք չ'անուեցաւ հան-
դէպ զինքը ա՛յնքան փառաբանող ժո-
ղովրդին ցաւերին, ու կարծես թէ՛ Հա-
յը ստեղծուած ինչէր լիկ ողջակէզ մը
դառնալու :

Հոս մանկամարդ կ'ըն մը, մայր մը,
մէկէ աւելի գաւառաց, անորոք բա-
ղուկներով իւր սիրտուն հոգեհա-
տորն գրկած, մայրական գերագոյն
ճիգեր կը թափէ զայն սաստկաշունչ
ցուրտին ու բուքին անգթութենէ
պատասպարհու : եւ իր խոռոչացեալ
աչաց այլ եւս ցամքած ծորակներն
լայնօքէն բացած՝ արտատուաց ջերմ
կայլակներու հեղեղովը կ'երազէ տաք-
ցնել կիսակենդան մանկիկն որ հաց
կաղաղակէ :

Ո՛հ, արական սեռը, որքան ալ
զգայուն լինի նա եւ զիտ, բայց եւ
այնպէս, նա դարձեալ անկարող է
ճշգրտապէս նկարագրելու էգին՝ մայ-
րական գորովոյ հոգեբանութիւնը : մեր
խելապատկէն զուրս կը մնայ ամբողջ
զաղապար մը կազմելու, հայելիաց-
նելու կնոջ եւ մանուսանդ մօր մը հո-
գետապարն : Ներսէ հանդէպ իւր զաւ-
կին տաճած խանդաղատամաց եւ գուր-
դուրանքի անհունութեան սահմանը
գծել եւ որոշել, վառիկ անծայր է
ան, ինչպէս երկրագնդին հսկայ զան-
գուածը :

Միթէ անոնք ալ մարդկային էակ-

ներ չեն : չունին գոյութեան մեզ
համահասար իրաւունքը, վայելելու
Աստուածային բարիքը եւ ուրախա-
նալու բնութեան պաշտեւած վայել-
քովը : Թէեւ անոնք բաղդէն հալա-
ծական մարդկութենէ անտեսուած
լքեալ արարածներ լինին : բայց եւ
այնպէս անոնք իւրեանց դժբաղդու-
թենցը մէջ, դարձեալ մերն են, մեր
արիւնակից եղբայրներն եւ հարազատ
քոյրերն, Հայաստանի եւ հայութեան
իսկապէս պահապան հրեշտակներն,
ազգային այդ մեծ չէնքին՝ անկիւնա-
քայն : Կարծէ ուրեմն արգահատիլ ա-
նոնց վիճակին, լսենք, անոնց նուաղ-
եալ ու բեկ բեկ ձայնն որ կը կոչէ.
օգնութիւն : Եւ ի՞նչ կայ աւելի վսեմ
բարեգործութիւն, առաւել հոգեպա-
րար, քան հրճուանքն ունենալ անա-
նելու եւ կարենալ սրբելու : Թշուառի
մը արտասուքը, չեղտ մը հաց տալ
մեր նմանաց, եւ զեղ ու դարման
մահաւոր՝ հիւանդին :

Դուք, բաղդազան եւ համախմբ
կերակուրներով ծանրաբեռնեալ սե-
ղաններու քաղցրութիւնը կուշտ ու
կուռ վայելող, ու այլ եւս յափշտած
տաքուկ սենեկի մէջ, ճարձատու
վառարանին շուրջը, թաւշնայ թիկնա-
թուներու մէջ ընկողմանած, կը մտա-
բերէք արդե՞ք, ի՞նչ գուրտ մարդ-
կային ստուար մեծամասնութիւն մը
կայ որ թշուառութեան համատարած
ովկիւնին մէջ յուսահատ ու գողգո-
ղուն՝ փշուր մը հացի կարտոր կը քա-
շէ, եւ առկայձեալ օճախին ժոխիկնե-
րու վրայ բաղձած՝ աչքերնին սեւեռած
կէտի մը, ի գուր կորոնեն կայծ մը,
հիւլէ մը իրենց սառկարած մարմնին
տաքցնելու :

Իսկ դուք — առանց սակայն ձեր
քնքուշ պատուազգածութիւնը վիրա-
ւորելու ուղիւ — նորաձեւութեան,
արդ ու զարդի եւ աւելորդ պճրանաց
հոգեով ու սրտով սիրահար փափկա-
սուն օրիորդներ, ելք ա՛յնքան խը-
նամբոտ կը ջանաք ձեր զարդի-
նաց մէջ նոյն իսկ անհայն թերութիւն
մը չի սպրդի, կարող թէ անկար ձեր
չնորհալի հրապոյնի նսեմացնել, ի՞նչ-
պէս ուրեմն թոյլ կուտայ ձեր գգա-
յուն սիրտը : մանաւանդ ինչպէս կը
հանգարտի ձեր խղճը, իտեա ձեր
նմանեաց հազարաւորներու ոչ պա-
տուարեւ մեղութիւնը որը նոյն իսկ
ձեր սեռին եւ ձեր համաստեղութեան
վիրաւորանք կը պատճառէ : դուք որ
մարդկային սեռի է՛ն քնքուշ, է՛ն
զգայուն մարդ կաղձող էակներն ըլ-
լալ կոչուած էք, ու ձեր սիրտն միշտ
պատրաստ է զիջելու եւ ամբողջու-
մեծ է ուրեմն ձեր կոշուրը մարդկու-
թեան մէջ, եւ մեծագոյն է ձեր պաշ-
տօնը հանրային բարեգործութեան դե-
րին մէջ : Ինչո՞ւ պարտա՞ւանց ըլլալ :

Իսկ դուք վերջապէս թագազարդ
գլուխներ, գուրք որ ձեր ձեռնաց մէջ
կ'եղունացուցած ունեք միլիոնաւոր
ժողովրդեան ճակատագիրն եւ անոր
բաղդովը կը խաղաք : ձեր ուրախու-
թեան ու հեղանքի ժամերէն արբիօք
մի րոպէն կը զոհէ՞ք, ձեր հպատա-
կաց վիճակին բարեկաման համար,
անոր խաղաղ կենցաղավարութեան :

Ո՛հ, հարց մը, որուն թէեւ կը
փափաքիմ ուրախութիւն պատասխան մը
տալ, սակայն զրիչս կը կտաի, մե-
լանը կը ցամքի, ու ներքին ձայն մը
զիս կ'ստիպէ արդարութեան հպատա-
կիլ : եւ ինչպէս հակառակել անոր,
քանի որ դեռ երէկ ջարտական անար-
գար հրովարտակ մը՝ ամբողջ ազգի մը
միլիոններ արժող դարաւոր հարստու-
թեան յարգուելիս գրաւուած կը վճռէ.
աղդի զ կուրմը՝ իւր է՛ն թանկագին
յիշատակներէն, եւ միանգամայն,
հայր իւր մի քանի հարիւր գաւա-
ներէն : Այո՛, թագաւորը գլուխներն

երբեմն հասարակ ոճրադրած է մը աւելի
մարդասպաններ եղած են, եւ նոյն
իսկ ազգասպաններ : անոնց համար
չկայ քաւարան :

Եւ ձերադն աւ չընէ ուրեմն բա-
ռական լայն շառուիով : Դեռ քեզ հեռ-
քի տուած, ոգի ի՞նչօրն չ'աշխատեցան
հայութիւնը իսպառ ջնջել, մին ի
Հայաստան իսկ միւսն ի . . . իւրեանց
զիւային հարամտութեան բովանդակ
մեքենայութիւնին ի գործ ածեցին,
պատմական փառաւոր անցեալով հպարտ
իսկ այժմ էլ գոյութեան իրաւունքը
վայելող պատկառելի ազգ մը ոչնչա-
ցնելու : յառաջգիծութեան ընդունակ
կուրտիական ժողովուրդ մը մարե-
լու :

Ինչդիք է սակայն դիտեալ թէ, յա-
ջողեցան անոնք, եւ կամ պիտի յա-
ջողին իւրեանց հր շայն ձեռնարկին
ի կատար ածել : անա կնճոռոտ հարցը
Սակայն ուշ թէ կանուխ, մահիկը
ամօթահար սեղի տալով հային
իրաւունքը պիտի յաղթանակէ : Եւ օր
մը չ'է օր մը անշուտ արգարադատ
բաղուկ մը, առջայն թափը ջախջա-
խելով որսաւանման ձայն մը պիտի գոչէ
«ա՛լ իրաւական է : ճիւղող անողորմ,
հերք միլիոնաւոր անմեղներու արիւ-
նը թափեցիր» : Եւ ներքին համագու-
մ մը, զիս սոյն հաւատքին մէջ կը գո-
րացնէ : Իսկ մեզ կը մնայ միմիայն
աջալուրջ լինել եւ կանխապատրաս-
տուելով հազամանքներէն օգտուելու :
չափ ուրիշութիւն ցոյց տալ :

ՎՍՈՆՍՅՈՒ

ԴԱՎՐԵԹԻ ՀԱՅՈՒՆԵՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Դաւրեթի Հայունեաց Բարե-
գործական Միացեալ Ընկերու-
թիւնը բարեհաճած է մեզ զրկել
իւր 1902 — 1903 ուսումնական
տարեշրջանի տեղեկագիրը — հա-
շուեցոյցէն երկու օրինակ :

Ձանոնք աչքէ անցնելով սրտի
անհուն բերկրութեամբ կը տե-
ղեկանանք թէ Պարտկաւորութեան
անկիւնը ամբողջ հայուն հինքն
էր ջանքերով ու կամքի օրինա-
կելի տակունդութեամբ մը քանի
մը տարիներէ իվեր կը շարու-
նակեն իրենց զհանդուրթիւնները
Արարատական խաւ անկիւններ-
ը ըլլալ ու գիտութեանէ զուրկ
հայ գիւղերու մէջ ուսում եւ աղ-
գային գաղտնաբարութիւն տա-
րածելու համար : Ընկերութիւնը
զգրոյցներ հաստատած է հետեւ-
եալ տասը գիւղերու մէջ եւ
տարիներէ իվեր կ'անուանու-
րապէս կը մատակարարէ զանոնք :

Ուրի, Ռահուա (Ուրի գաւառ)
Իբի — Լիպալ (նոյն գաւառի մէջ)
Բարաուա (Բարաուա գաւառի
մէջ), Դիզալ (նոյն գաւառի մէջ),
Ռիւրի (գաւառ) Իհէրէլէք, Թու-
մար, Ալագան :

Տեղեկագիրը այդ գիւղերու
մէջ հաստատուած դպրոցներուն
մասին մի առ մի տեղեկութիւն-
ներ տալով կըսէ, « Զափազանց
միախառնակ երեւոյթ է, որ
ուսման եւ կրթութեան կենսա-
տու լոյսը հետզհետէ թափան-
ցում է Արարատական հայ գիւ-
ղացու խրճիթը — գեղջուկը սա-

կառ. առ. սակառ. ընթացումը է կրթական դարձի յարգն ու նշանակութիւնը, զգուս է սէր դէպ եկեղեցին ու դպրոցը, հետեւապէս ոտք կախում ինքնաճանութեան շաղի վրայ»:

Ընկերութիւնը նաեւ Դավրէթի մէջ հաստատած է 2 արհեստանոց աղկաւնց կար ու ձեւի համար: Վերջի շրջանին այս արհեստանոցներէն հինգ օրի սրբներ ընթացաւարտի վկայական ստացած են: Նոյնպէս Դավրէթի մէջ ընկերութեան մատակարարութեան տակ կը գտնուին երկու մանկապարտէզներ 73 փոքրիկներով:

Գաղով դպրամանկան մասին ընկերութիւնը անցեալ տարիէն ունէր 66082 զուան դրամագումար: Վերջին ուսումնական տարեշրջանին իր ընդհանուր ծախքին գումարը եղած է 35,428 զուան իսկ ընդհանուր հասոյթը 29,962 զուան, այնպէս որ ստիպուած է այս վերջին շրջանին մէջ դրամագումարէն 4466 զուան պակսեցնելու, առանց վարժարաններուն թիւը աւելցնել կարենալու:

Այս առթիւ հարկաւոր եւ օգտակար կը գտնենք տեղակազրէն արտատպել հետեւեալ էջը:

«Բոլորելով ներկայ ուսումնական տարեշրջանը՝ հասարակական սեղանի վրայ է դրուած ընկերութեանս գործունէութեան տեղեկագիրը:

Ինչպէս յայտնի է, անցեալ տարուայ վերջերին Ռուսաստանի Եկատերինոգրք քաղաքում երկրորդ անգամ հասկում իր մանկանոցուն կնքեց ոմն Արամ (Ահարաման) Ղազարեանց, Թիֆլիզցի, Համգուցեալը բռնուած լինելով անբուժելի հիւանդութեամբ թողնելով անհետնելով, որ իւր օրերը համարուած են, կրթիչն առն, տեղ, ընտանիք, ազգական եւ մանրավաճառութեամբ կուպկ-կուպկ չափով գրամբ իզուր կ'ընտնուէր, մասնակց մահուանից յետ եւս ապրել, մի գրական հետք թողնել: Այդ անգամակէտ, առաւ, բայց ազնուամարտ հայր մահուան անկողնում յիշեց պարսկական կրթական գործի անհաւանանելի գրութիւնը եւ ցանկացաւ լուսաւորութեան մի ջան տնկել, լուսոյ մի տաճար կանգնել իտէլ եւ խաւար անկեղծներէն մէկուն: Իր չափաւոր կարողութիւնը (20-25 հազար լուրի) իր մերձակոյններին ու կնոջը մասն հանելուց եւ 1000 ռ. Տըրապիզոնի նորակառոյց եկեղեցու սեղանին նուիրելուց յետոյ, ինչպէս ասուած են «աւելի բաժինը» 9000 լուր. օրինաւորապէս հաստատուած ու վաւերացուած կտակով նոյն քաղաքի ծխատէր արժ. Տ. Գարեգին քահ. Բաղդասարեանի ցուցմամբ ու խորհրդով, որին ընկերութիւնս հրապարակաւ իր սրտաքին եւ խորին չորհրհակալութիւնն է յայտնում, թողեց ընկերութեան իրաւաստութեան ու արքայազնութեան ներքոյ, որպէսզի իր անուանով դպրոց հիմնուի Պարսկաստանի ու եւ հայաբնակ գիւղում ծախսելով դրամագումար, որ ըստ կտակի անձեռն մխելի պիտի մնայ, ստացած տոկոսիքը, Թարմար եւ իրօք արժանի տեղի ընտրութեան համար, ուր պիտի հիմնուի «Արամ Ղազարեան» դպրոցը, լուրջ խորհրդակցութիւնից ու մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ վարչու-

թիւնս կանգ առաւ մի բոլորովին «աչքից հեռացած, մաքից մոռացուած» վայր վրայ, այդ վայրը Միսրոպա գաւառամասն է իր 5 գիւղերով, ուր ապրում են մի բուռն թրքախոս հայեր, ընդամենը 78 տուն, հայեր, որոնք կանգնած կորստեան անողունի շրթունքին, կորցրել են իրանց ազգային առանձնատկութիւնները եւ լեզուով, սովորութիւններով, նիստ ու կացով ու հագուստի տարազով չեն զանազանում չընկալատող տարիքի նախնական պատրաստութիւնների համար հոգեցուցիչ եւ յարմար ուսուցիչ վարձուել: Դպրոցն առաջիկայ ուսումնական տարեշրջանին կրացուի թովլաւար գիւղում, որ կենդրոն է միւս գիւղերի:

Չնայելով որ գաւառական դպրոցներ թիւն մէկով աւելացաւ, այնուամենայնիւ կարիքը չատ ու չատ մնծ է, նա բարձրագոյն կանգնած է իր բոլոր առարկաներում: Բազմաթիւ գիւղեր դուրի են ուսման ու կրթութեան կենտրոն լոյսից: Պարսկահայ գիւղերը խաթմարում է սգիտութեան թանձրացած խաւարում, նա կորագրել կանգնած է անասական քայքայման առաջ: Թէ՛ն եւ ընկերութիւնը, յենակէտ ունենալով հայ ժողովրդի նիւթական եւ բարոյական աւելցումները (այդ յոստով էլ ասպարէզ է նետուել), հետզհետէ մերձենում է իր գուրգուրած ու փայփայած գաղափարներին եւ բարոյապէս վարժարուած համարում իրան, բայց եւ այնպէս թնիկ կարիքները այնքան ծանր են, իրերի վիճակն այնքան անմխիթար եւ արտաքին օժանդակութիւնը գործադրաբար զգալի կերպով այնքան նուազել, որ վարչութիւնս ստիպուած եղաւ այս տարի եւս իր հաստատութիւններ թիւր նոյնութեամբ պահելու համար դարձեալ ծանրանալ ընկերութեան դրամագումարը: Ներկայ նիւթական անձուկ դրութիւնը միջոց չէ տալիս ոչ միայն գոյութիւն ունեցող դպրոցների թիւն ընդարձակելու եւ ընկ. գործունէութեան սահմանն ընդլայնելու, այլ եւ վարչութիւնս ստիպուած կ'ընի հակառակ իր կամքի նրա՛ցից 2-3 փակելու, եթէ մարդասէր եւ բարեբար ձեռները չգան թեթեւացնելու ընկերութեանս ստանձնած գծուատար, բայց քաղցը լուծը:

Վերստին հրատարակելով այժմիան Գահակալ Վեհափառ Շահնշահի հայրախնամ եւ լուսավոր կառավարութեան ընկերութեանս շնորհած հրովարտակը (Ֆէրման), ինքնաճանաչ եւ պարտաճանաչ ազգայնիկների լուրջ ու շարունակական կնք հրաւիրում այդ խիստ նպաստաւոր հանգամանքի վրայ: Ժամանակ է արդէն օգտուել այդ հանգամանքից, օգտուել խելացի կերպով ընդարձակ չափով...:

Ընկերութիւնս լրայոյս է, որ Արամ Ղազարեանի մարգարէր օրինակին հետեւողներ կ'ընտնուին: Տուէ՛ք պարտներ, յարուող տուէ՛ք, հաւատալով, որ դուք ձեզ էք տալիս, ձեր որդոցն էք տալիս: Ատրպատականի ուսումնական եւ անմեղ հայ մանկտին աչքիքը ձեր ձեռքին յառած՝ ձեզանից ոչ թէ հաց է աղբիւսում, այլ լոյս մի այն լոյս: Միլիոններ ծնունդ են եւ մեռնում առանց հետք թողնելու, իսկ լարի անունը, ամբիծ յիշատակը անանց են, յաւիտենական...:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԵ, 21/11 դեկտ. 1903

Մատաւորապէս 5—6 ամիս առաջ հոս ալ կազմուեցաւ ինպատար Զէյթունի Բարեփրաց ընկերութիւն մը, որուն նպատակն է պէտք եղած օգնութիւնը ընել դատարարակելու եւ պատասխարելու համար գծախոյ որբերը, որոնք այս Զմրան եղանակի մէջ անպատասխար մնացած են հսկայ լեռներու վրայ, այն լեռները որոնց վրայ ժամանակ մը յաղթութեան ծափեր կը զարնէին:

Այս առթիւ գովելի է Ֆառուզի վահանայը Տ. Բարդուղիմէոս վրդ. թագաճիւսնի աշխատութիւնը, ճիշդ աւետարանի բաժնէն «հովիւ քաջ գնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց» նա ժամանակ մը պատերազմի մէջ մինչեւ իսկ իւր անձը զոհելու դրած էր ու հիմա ալ նոյն նպատակաւ դուրս եկած է դատարարակելու եւ որբերու համար այն արցունքները որոնք կը հոսեն առիւծ Զէյթունցուն աչքէն օգնութիւն օգնութիւն պոռալով, նոյնպէս գովելի է տեղւոյս կարգ. Մասնախումբի աշխատութիւնը որուն շնորհիւ 300 ի չափ բաժանորդ ունեցաւ ընկերութիւնը: Նաեւ վերջերս ծանօթ զարդանկարիչ Տիար Ս. Պէղիբեան նոյնից հայաստանի մեծագիւր գունաւոր պատկերները որոնց հասոյթը կը յատկանայ յիշեալընկերութեան միայն Գահիրէի մէջ վաճառելու պայմանաւարդ. Մասնախումբները տարւոյ առթիւ այդ նկարները ազգայիններու նուէր կը խրկէ. Կը յուսամ թէ այս անգամ թմրած եգիպտահայը (անշուշտ բացառութիւնը յարգելի է) սթափելով իր անտարբերութենէն պիտի օգնէ այս կարեւոր ձեռնարկին, սրբելու համար գծապղծ Զէյթունցի որբերու արտատունքները:

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱԼԱՅՈՒ Պուկարիոյ գործակատարին կողմէ տեղեկութիւն տրուած է Պատրիարքարան թէ, եղած զեկուցման համեմատ հազորդուած ըլլալով իշխանապետութեան որ Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան օրինական ընտրութեամբ առաջնորդ ընտրուած է Պուկարիոյ, այս անգամ պատասխան եկած է իշխանապետութենէն թէ ճանչցուած է իր այդ պաշտօնը եւ հարկ եղած արձանագրութիւնը կ'տարուած:

ՊԱԼԱՅՈՒ գտնուող վանքիներ կը տեղեկացնեն թէ վանայ եւ Աղթամարայ վիճակները զուրկ մնացած են հոգեւոր եւ կրթա-

կան խնամքէ: Պալաւէի, Արճէշի, Արծկէի եւ Աղթամարայ վիճակներու փոխ առաջնորդութիւնները բոլորովին թափուր են, վանքերը այլեւս վարդապետ չեն հասցներ, մէկ քանիները վերջին տարիներու մէջ վախճաներ են, մնացեալներն ալ ծեր եւ անուս ըլլալով օգտակար չեն կրնար ըլլալ: Հետեւաբար փորձ եկեղեցականի մը ներկայութեան պէտքը անհրաժեշտ է եւ այդ պաշտօնին յարմար կը նկատուի Երզնկայի առաջնորդ Տ. Գահիրէ վարդապետը:

Ք. Անի մը տարի առաջ Աղէքսանդրիոյ մէջ ծախուած երուստպէմի պատկանող ընդարձակ ազգային դեմոնի մասին Բիւզանդիոնի հաղորդուած տեղեկութիւններէն կ'իմանանք թէ՛ այդ գետինը 40,000 քառ. մետր տարածութիւն մունի եղեր եւ ծախուեր է մէկը 15 ֆր. ի որ յետոյ 50 ֆր. արժէք կը ստանայ: Այդ կարեւոր հողը ծախուեր է Ալեքսանդր Սնգլ. ընկերութեան, որ փոքրցներու բաժանումները ընկելով մաս առ մաս ծախած է ու կը ծախէ: Այս ընկերութիւնը գետնին մէկ մասը Անգլիացի մը ծախեր է մեկը 2 ու կէս անգլ. սակի: Նախկապերը կըսէ թէ այս գետնին ծախուելէն օգտուողներէն մէկն ալ Տ. Վահրամ Վ. Աղարեանն եղաւ, որ այդ շնորհիւ «արարթման» մը շինեց, ուրկէ տարեկան 300 լիւրայի մօտ զուճար մը կը ստանայ:

ՅՐԻՍՏԱՆԻ Ժամօթ խնդրոյն առթիւ Խառն ժողովը հարկ դատած է Ա. Ստուգել պարտքին ածելուն պատճառը, Բ. երուստպէմի մատակարարութեան իր բոլոր ճիւղերով եւ իրաւացիի վերածուելը, Գ. ճշգրել կարուած ծախան շինութիւններէ գոյանալիք օգուտը, Դ. վանական վարչութեան կեդրոնէ հաստատուած կանոնադրին համաձայնելը, Ե. վանական վարչութեան կանոնաւոր կերպով վերակազմուելը, Զ. խոստացուած համարատուութեան օր առաջ իրականացումը, Է. երկպառակութեան բարձրութիւն եւ այս բոլորի գործադրութեան համար երկու ներկայացուցիչ զրկել երուստպէմի:

Ս. ԷՋՄԻՍՏՆԵ տրուած տեղեկութեանց նայելով, կրտէ «Սուրհանդակ», Ս. Հայրապետը հարկադրուեր է վերջին օրերս փոխառութիւն մը ընել վանքին եւ ձեռնարանին աբօրեայ ծախքերուն համար, ի մօտոյ եթէ կարգադրութիւն մը չըլլայ, կը խորհուի միաբան վարդապետներէ ոմանք ժամանակի մը համար ուրիշ վանքեր զրկել եւ ձեռնարանը գաղթեցնել: Միւս կողմէ տեղեկութիւն կը տրուի որ դրուած կալուածական եկամուտներէն սկսած չէ դրամ հաւա-

